№ 109 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 1889 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 № 109

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են մամիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Կովկասեան ցուցահանդէս. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Արտաքին լուրեր.—ԽԱՌՐԸՆ ԼՈՒՐԵՐ· — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ· — ԲՈՐՍԱ· —ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Նամակներ Թիւրքաց Հայաստանից·

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Կովկասեան ցուցահանդէսի այն բաժինները, որոնք ներկայացնում են մեզ մեր տնտեսական, արդիւնաբերական և արհեստագործական կեանքի մէջ որ և է առաջադիմական որոշ քայլեր, մեզ, անտարակոյս, աւելի կարող են հետաքրքրել, քան թէ մեր բնական բերքերի և անշարժ գրութեան մէջ դարերից ի վեր մնացող մեր ժողովրդական նահապետական արհեստների բաժինները։

Ցիշեալ առաջադիմական հաստատ քայլերը ներկայացնում են հետեւեալ բաժինները· 1) մեր երկու սեռի այլ և այլ դպրոցների արհեստագիտական բաժինը, 2) տեղական արհեստանոցների և գործարանների բաժինը, 3) մեր երկրում զետեղված օտարազգիների գործարանների բաժինը, 4) գիւղական օրինակելի տունը, և վերջապէս 5) մեզ մօտ Եւրոպայից և Ռուսաստանից պրոպագանդայի համար բերված գիւղատնտեսական այլ և այլ մեքենաների և գործիքների բաժինը։

Սկսենք դպրոցական բաժնից։

Պէտք է խոստովանվել, որ ոչ թէ միայն Թիֆլիսի, բայց Կովկասի և Անդրկովկասի գրեթէ բոլոր տեղերի ռուսաց թէ պետական, թէ ժողովրդական և թէ արհեստաւորաց դպրոցները ներկայացրել են իրանց արդիւնքները։ Իսկ հայոց դպրոցներից միայն Թիֆլիսի իգական հայոց դպրոցները մասնակցում են ցուցահանդէսին։ Ռուսաց պետական և ժողովրդական-տարրական երկու սեռի բոլոր դպրոցների պրոգրամներում, ինչպէս երևում է մատչած է արհեստների, ձեռագործի, նկարչութեան, կաղմարարութեան և տեխնիկական ուսման սկզբունքների աւանդելը։

Արական դպրոցները, ինչպէս օրինակ՝ Թիֆլիսի կլասիական երկու գիմնազիաները, բէալական դպրոցները, ուսուցչական դպրոցը, Երևանի ուսուցչական սեմինարիան, Երևանի գիմնազիան, Ստավրոպոլի, Ելիսավետպոլի, Վլադիկավկասի գիմնազիաները, Գորու ուսուցչական սեմինարիան, Շուշու բէալական դպրոցը և այլն,—բոլորն էլ ներկայացրել են իրանց աշակերտների ձեռագործ աշխատանքներ՝ նկարչութիւն, կաղմարարութիւն, ճախարակագործութիւն, լուսանկարներ և այլն։

Իգական դպրոցները, ինչպէս Թիֆլիսի իգական գիմնազիան և Թիֆլիսի ռուսաց բարեգործական ընկերութիւնների դպրոցները, նմանապէս Կովկասի և Անդրկովկասի գրեթէ բոլոր քաղաքների իգական գիմնազիաներն ու պրոգիմնազիաները ներկայացրել են ցուցահանդէսին այլ և այլ գեղեցիկ և նուրբ իգական ձեռագործներ։ Մի և նոյն բաժնում հանդէս են դրել իրանց աշակերտուհիների ձեռագործները՝ Թիֆլիսի քաղաքային իգական արհեստաւորաց դպրոցը, «Հայուհեաց բարեգործական» ընկերութեան արհեստաւորաց և Մարիամեան-Անանեան օրիորդական ուսումնարանը։ Այս վերջինը մի գեղեցիկ ձեռագործ գորգ է հանդէս դրել։ Բայց բոլոր իգական արհեստաւորաց դպրոցների աշխատանքներից գերազանցում է իր աշխատանքներով,—զգեստների կարելով, նուրբ գործուածներով և մանաւանդ հարթակարով՝ Թիֆլիսի քաղաքային իգական արհեստաւորաց դպրոցը։

Ուրիշ կողմից և արական բոլոր դպրոցներից գերազանցում է իր աշխատանքներով Թիֆլիսի Միքայէլեան քաղաքային արհեստաւորաց դպրոցը. լաւ են մանաւանդ այդ դպրոցի հիւսնութեան և փականագործական բաժինների արդիւնքները։ Այդ դպրոցի աշակերտների ձեռքով պատրաստած կահկարասիները իրանց նրբութեամբ պատիւ են բերում դպրոցին։

Եւ մինչդեռ ռուսաց թէ քաղաքային, թէ պետական, թէ տարրական-ժողովրդական դպրոցները և թէ ուսուցչական սիմինարիաները անհրաժեշտ են համարում վարժեցնել իրանց սաներին այլ և այլ ձեռագործ աշխատանքների կատարելում,—մեր հայոց թէ տարրական-եկեղեցական, թէ թեմական դպրոցները և թէ մեր ճեմարանը՝ արհամարհում են աշակերտներին արհեստների, նկարչութեան, մի խօսքով ֆիզիկական և տեխնիական որ և է աշխատութեան մէջ վարժեցնելու անհրաժեշտութիւնը։

Երբ որ «Մշակը» մի որ և է նոր և օգտաւէտ միտք էր յայտնում, օրինակ յայտնում էր որ անհրաժեշտ է մեր բոլոր թէ իգական և թէ արական դպրոցներում արհեստներ մտցնել,—ամենքը սկսում էին վրդովվել, յարձակվել մեզ դէմ, միայն այն պատճառով որ մտքի յայտնողը «Մշակն» է եղել..... Իսկ այժմ ցուցահանդէսի այցելողները թող համոզվեն՝ որքան մեղանից առաջ են գնացել, ժամանակի պահանջին համապատասխան հաստատ և վճռողական քայլերն անելով՝ մեր հարևան դպրոցները, իսկ մենք յետ ենք մընացել և այդ տեսակէտից անկարող կը լինենք մրցել յիշեալ առաջադէմ դպրոցների հետ։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 23-ին

Ձեր յարգելի լրագրի № 104-ի մէջ՝ վարչութեանս խնամքին յանձնված Գայանեան օրիորդական ուսումնարանի մասին զետեղված էր հետեւեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի Գայանեան ուսումնարանը քանի գնում, այնքան էլ ընկնում է և աշակերտուհիների թիւը զգալի կերպով պակասում է։ Այսօր իւրաքանչիւր դասարանում նստած են ոչ աւելի քան 15—20 աշակերտուհի և չը նայելով սրան, ուսումնարանի վարչութիւնը շարունակում է զուգընթացներ պահել՝ միայն որ մի քանի ուսուցիչներ և ուսուցչուհիներ այնտեղ պաշտօն ունենան և այդպիսով անխնայ և անտարբեր ծախսում է հասարակական փողերը....»

Որպէս զի այս անհիմն լուրը չը գայթակղեցնի մի քանի թերահաւատ մարդկանց, խնդրում ենք, զետեղէք ձեր լրագրի մէջ այս երկտողը։ Ս. Գայանեան ուսումնարանի ընկնելը մինչև օրս, բացի լրատուից, ղեռ ոչ օքին նկատելի չէ եղել, որովհետև, ինչպէս չատերին էլ յայտնի է, թէ ուսուցչական խմբի գործունէութեան մէջ և թէ աշակերտուհիների պարապմունքի մէջ առաջադիմութիւնը օր ըստ օրէ աւելանում է. և նոյն իսկ աշակերտուհիների թիւն էլ նախընթաց տարիներից պակաս չէ։ Ինչ վերաբերում է աւելորդ զուգընթացներ պահելուն, կասենք այսքանը, որ առաջին դասարանի ա. բաժանման զուգընթացներից իւրաքանչիւրի մէջ առ այժմ կայ 16 աշակերտուհի, 5 աշակերտուհի էլ ընդունված են, բայց դեռ չեն յաճախում դասերին, և բացի սրանից, այդ դասարանում ընդունելութիւնը շարունակվում է մինչև յունվար ամիսը, այնպէս որ տարվայ սկզբին այդ դասարանի աշակերտուհիների թիւը միշտ պակաս է լինում, բայց յետոյ աւելանում է։ Առաջին դասարանի բ. բաժանման մէջ գտնվում է 42 աշակերտուհի և մենք այդ դասարանը բաժանել ենք զուգընթացների, աչքի առաջ ունենալով երեխաների փոքր հասակը և այն հանգամանքը, որ 42 հոգի 9—10 տարեկան երեխաներ միասին պարապելով, երբէք օրինաւոր առաջադիմութիւն չեն ցոյց տայ։

Առաջին դասարանի գ. բաժանման մէջ գտնվում է 32 աշակերտուհի, իսկ երկրորդ դասարանի ա. բաժանման մէջ 34 աշակերտուհի, բայց ոչ մինը սրանցից զուգընթացներ չունի։ Երկրորդ դասարանի բաժանման մէջ գտնվում են 7 հոգի։

Ինչպէս չատերին յայտնի կը լինի, վարչութիւնս մինչև այժմ չատ բարեխղճաբար և խնայողութեամբ է վերաբերվել դէպի ուսումնարանիս փողերը և երբէք աւելորդ ծախսեր չէ արել. նոյն իսկ որքան յայտնի է վարչութեանս, այժմ էլ ուսումնարանումս ոչ մի ուսուցիչ կամ ուսուցչուհի աւելորդ տեղ չէ բռնում. իւրաքանչիւր ուսուցչին յանձնված է մի դասատուն և 12 կամ աւելի դաս, նոյնպէս և բոլոր ուսուցիչներին յանձնված է իրանց գործը և նրանցից ոչ մէկի ծառայութիւնը աւելորդ չէ ուսումնարանում. ուրեմն և անխնայ, անտեղի ծախսեր չեն կարող գոյութիւն ունենալ նրա մէջ։

Ընթերցողին է մնում եզրակացութիւններ հանել յիշեալ նկատողութիւններից, որոնց մասին մեր ասելիքը առ այժմ այսքանը միայն կարող է լինել։

Վարչութեան նախագահի պաշտօնակատար՝ Ղևոնդ աւագ ք. Խարազեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք պ. Սուզանաճեանից մեր երաժշտական հեղինակ պ. Կօրգանովի նոր երաժշտական գրուածք «Նոր բայաթի» (Nouveau Bayati, potpourri oriental sur des morifs arméniens et géorgiens, par Génari Karganoff)· Այդ նոր երաժշտական գրուածքը շնորհալի կերպով է կազմված և բաղկացած է հետեւեալ կտորներից· 1) Introduction, 2) կտոր կըտոր ամպ էր գալիս, 3) Marche arménienne, 4) Danse arménienne, 5) Мравалжамиеръ, և 6) Lesginka. Պ. Կօրգանովի այդ հեղինակութիւնը արժէ 1 բուբլի։

—

Այն օրից, երբ Կովկասեան ցուցահանդէսի մուտքը 30 կոպէկ է նշանակվել, ցուցահանդէսի այցելողների թիւը լինում է օրական 2000-ից մինչև 3000 հոգի։

—

Այդ երկար և մեծ-մեծ գրաւներով խաղացողները առհասարակ երիտասարդներ են, մի խումբ, որոնց յանձնել են իրանց ծերունի ծնողները— բազմաթիւ ընտանիքի պարէնը մատակարարող— խանութներ. և այդ երիտասարդները գալիս են խանութ, անում են մի որոշեալ գումարի առևտուր, խանութը դրացու պահպանութեան են յանձնում և գործի պատրուակով՝ վազում են իսկոյն «քաղինօն»..... Հետաքրքիր է նրանց մուտքը և ելքը.... Ահա մտաւ նա ծանրութեամբ, բարևեց լրջութեամբ նստողներին, մի սուրճ ուզեց և մի ներգիլէ, սկսեց խմել և ծխելով խօսել սրա նրա հետ և իբրև թէ ակամայից նայել բիլիարդ խաղացող նորասներին.... ծխեց, ներգիլէն ետ տուաւ և ոտքի ելաւ.... մի և նոյն ժամանակ շարժվեց միւս կողմից և ընկերը, և երկու հերոսները վերցրին մի մի գաւազան.... մի շարժում է առաջանում նստողների մէջ. նրանք մօտենում են աւելի լաւ տեսնելու համար.... խաղացողները, որոնք մի բաժին (partie) խաղին 50 դրէմ պիստակ դրաւ դրել էին, սկսում են խաղը։

Նիւր և երեկոյեան վերադարձիր և տեսնում ես որ քաղինօջին խաղացողներին զօռով ետ է քաշում խաղից ու համարեա թէ վռնտելով, դուրս է հանում սրահից, որովհետև Մուստաֆա փաշայի հրամանով՝ մինանալուն պէս բոլոր հասարակաց տները պիտի փակվեն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

«Երբ է արդելված բժշկին իր նըժդարը վերքի մինչև խորը մղելը....»։
Վիկտոր-Հիւգո «Թշուառներ»

I

188.. յունիսի 30, Էրզրում.

Բարեկամ.

Ցիշեցիր ինձ, վերջապէս։ Շնորհակալ եմ, նամակդ այսօր իսկ ստացայ։ Բայց ինչու ուրեմն մեկնելդ այսչափ ուշ ես դրում. նոր հասար տեղդ· չը լինի թէ, լսածիս հակառակ՝ այդտեղի ճանապարհներն էլ Թիւրքիայի ճանապարհների նման անկանոն, խորտ ու բուրդ, քարոտ, երկիւղալի՝ թէ ամեն մի բոպէ ձիդ կը սայթաքի և ահա անդունդը կը զլորվես, երկիւղալի՝ թէ ահա այս կողմը աւազակներ քեզ կը մերկացնեն, այն կողմը քաղցած զիւտորները ծխախոտ կամ հաց կուզեն. և չունենալու դէպքում մի լաւ ձեղ կը ծեծեն, և փոքր ինչ հեռու էլ քիւրդերը կեանքդ կառնեն զուարճութեան համար.... Գոնէ, ինչպէս լսվում է այստեղ, այդ կողմը այդպէս բաներ չը կան....

Նոր լուրեր ես ուզում ինձանից։ Ի՞նչ նոր լուր տամ քեզ. կուզես լսել որ այս ինչ վաճառականը իր ճրագները վառեց *), այն ինչը յանկարծ հարստացաւ անյայտ աղբիւրներից.... քեզ այսպիսի բաներ չէ հետաքրքրում, այլ մեզ նման չարչիի **) մարդկանց միայն։ Քեզ հետաքրքրում է ժողովրդական, կրթական, աղգային կեանքը և այլն։ Հետզհետէ քեզ կը հաղորդեմ բոլորի մասին, չտագնապիս ոչինչ չը կայ, որովհետև այդ կեանքը մի նշանաւոր փոփոխութիւն չէ կրում և ես չեմ վախենում թէ նորութիւնները դու չը պիտի իմանաս..., Նոր լուրեր տուողը մեզ մօտ «Արևելք» լրագիրն է, այն էլ ժողովրդի կարդալու համար միայն երկու տեղ է ստացվում, Աստուածատրեանի ընթերցարանում՝ Գէօլ-բաշի, և Պողոսի ճաշարանա-գինետնա-սրճարանա-խաղարանա.... ընթերցարանում, որը գտնվում է ճիշդ առաջնորդարանին, եկեղեցուն և ուսումնարաններին կպած։ Քեզ միայն առաջինն է յայտնի և երկրորդին էլ ահա պատիւ ունեցայ քեզ ծանոթացնելու.... Ապադայ նամակներումս, երբ ուսումնարանների վրա խօսեմ, պատիւ պիտի ունենամ շատ անգամ քեզ այնտեղ մտցնելու....

Այս երկու տեղերումն էլ լրագիր կարդալու համար, սպասում ես մի շաբաթ և երբ փոստի օրը վազում ես այնտեղ, ներս ես մտնում թէ չէ խեղդվում ես զլանիկներից և նէրգիլէներից ժայթող կծու ծուխից, որի մէջ թաղված մի ամբոխ, ամենայն հետաքրքրութեամբ դիտում է իրանց միակ սիրելի կուռքին—բիլիարդին, որի վրա խաղում են երիտասարդներ, առաւօտեանից ի վեր և պիտի խաղան մինչև երեկոյ, պիտի ուտեն այնտեղ, չնչեն մի խումբ ապուշների հետ, քսակները քաղինօջին (պանդոկապետ, հիւրանոցի պահող) պիտի յանձնեն և պիտի երթան երազներով գոհ լինելու մինչև միւս առաւօտը....

Արի՛ և լրագիր կարդա այդպիսի տեղում....

Դու տեսել ես Կարինի երիտասարդութեան բիլիարդ խաղալու խանդը, բայց գուցէ այստեղ կարճ մնալուդ համար, չես կարողացել նկատել մի քանի հետաքրքիր երևոյթներ....

Հայերը այստեղ ես ցոյց են տալիս իրանց արամտութիւնը և աջողութիւնը.... Միշտ նկատել եմ, որ հայերը ամենից շատ են խաղում բիլիարդ (մանաւանդ «Էյժիի» ծխախոտի ընկերութեան մի տաս խմատակ հայ կաթոլիկ ծառայողները)· հայերը ամենից լաւ են խաղում, նրանք աւելի մեծ-մեծ գրաւներ են դնում և աւելի երկար են խաղում։

Այդ երկար և մեծ-մեծ գրաւներով խաղացողները առհասարակ երիտասարդներ են, մի խումբ, որոնց յանձնել են իրանց ծերունի ծնողները— բազմաթիւ ընտանիքի պարէնը մատակարարող— խանութներ. և այդ երիտասարդները գալիս են խանութ, անում են մի որոշեալ գումարի առևտուր, խանութը դրացու պահպանութեան են յանձնում և գործի պատրուակով՝ վազում են իսկոյն «քաղինօն»..... Հետաքրքիր է նրանց մուտքը և ելքը.... Ահա մտաւ նա ծանրութեամբ, բարևեց լրջութեամբ նստողներին, մի սուրճ ուզեց և մի ներգիլէ, սկսեց խմել և ծխելով խօսել սրա նրա հետ և իբրև թէ ակամայից նայել բիլիարդ խաղացող նորասներին.... ծխեց, ներգիլէն ետ տուաւ և ոտքի ելաւ.... մի և նոյն ժամանակ շարժվեց միւս կողմից և ընկերը, և երկու հերոսները վերցրին մի մի գաւազան.... մի շարժում է առաջանում նստողների մէջ. նրանք մօտենում են աւելի լաւ տեսնելու համար.... խաղացողները, որոնք մի բաժին (partie) խաղին 50 դրէմ պիստակ դրաւ դրել էին, սկսում են խաղը։

Նիւր և երեկոյեան վերադարձիր և տեսնում ես որ քաղինօջին խաղացողներին զօռով ետ է քաշում խաղից ու համարեա թէ վռնտելով, դուրս է հանում սրահից, որովհետև Մուստաֆա փաշայի հրամանով՝ մինանալուն պէս բոլոր հասարակաց տները պիտի փակվեն։

*) Ցաճկաստանում երբ կամենում են սնանկութիւն հրատարակել, իրանց հաշուետետրերը քաղով ծածկում են և նրա երկու կողմը մոմեր վառում. այդ նշան է սնանկութեան։

**) Շուկա, բազար։

ՄԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն հոգեկան ուժերով և կրքերով ազատ մարդուն համար, որ ինքնակամ ենթարկվում է մի գերագույն գաղափարի, գոյություն ունի մի գեղեցիկ ապագա։ Ամեն ինչ, որ ստեղծագործում է, ամեն ինչ, որ ոգեշնչում է, ամեն ինչ, որ ազատ է և ազատություն է տալիս, ամեն ինչ, որ գեղեցիկ է, ամեն ինչ, որ ուժեղ է, ամեն ինչ, որ ինքնակամ է, ամեն ինչ, որ ինքնուրույն է, ամեն ինչ, որ ինքնաբավ է, ամեն ինչ, որ ինքնաբուխ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ստեղծագործում է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ոգեշնչում է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ազատ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար գեղեցիկ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ուժեղ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ինքնակամ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ինքնուրույն է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար ինքնաբավ է, ամեն ինչ, որ ինքնաբերաբար

տութիւններ։ Քաղաքը գտնվելով այդպիսի զրութեան մէջ, ի հարկէ նրա մէջ միշտ անպակաս կը լինեն զանազան տարափոխիկ և վարակիչ հիւանդութիւններ, ինչպէս հէնց այժմ պատահում է, որ երբեմն մի տանից մի շաբաթվայ ընթացքում դուրս են տանում երկու-երեք մանուկների դագաղներ։ Ցայտնի է որ այժմ Թիֆլիսի մէջ տարածված են՝ դիֆտերիտ, աչքացաւ, քոլէրչ և այլ հիւանդութիւններ, և միթէ դրանք բոլորն էլ հետևանք չեն կեղտոտութիւնների և այն անհոգութեան, որին ենթարկված է քաղաքը առողջապահութեան կողմից։ Այդ բոլորի վրա, ի հարկէ, պէտք է հսկեն նրանք, որոնք ընտրված են քաղաքի վրա հոգալու, և եթէ դրանք հոգացին մեզ մաքուր ջուր մատակարարելու, թող վերջապէս հոգան մեզ մատակարարելու և մաքուր օդ։

—

Վերջապէս մեր խաչագողների վրա ուշադրութիւն դարձրեց յունադաւան հոգևորականութիւնը։ «Церков. Вѣд. պաշտօնական թերթում տպված է Երուսաղէմի պատրիարքի նամակը սինոդի օրեր-պրօկուրոր Պօբեդոնոսցէվին, որով խնդրում է նրանից «զգուշացնել ռուս ժողովրդին այն չարամիտ հայերից և նեստորականներից, որոնք Երուսաղէմի պատրիարքի անունով հարստահարում են խեղճ ժողովուրդը»... Նամակի մէջ բերված է մի կեղծ ստացագիր։

—

Հրատարակված է ռուսական ազգագրական ընկերութեան օրգան «Этнографическое Обозрѣніе» անուանով թերթի առաջին համարը, որի մէջ կայ մի յօդուած Ախալցխայի հայերի սովորութիւնների մասին։

—

Ցայտնի ժուրնալիստ Կրաեվսկի թողել է մի միլիոն հարիւր հազար բուբլի կարողութիւն։ Կտակը վաւերացնելու համար ծախսված է 43,000 բուբլի։

—

Բաւական չատ է այս տարի բարձրագոյն ուսումնարաններ մտնող հայերի թիւը։ Առ այժմ մտել են 6 հոգի տեխնոլոգիական դպրոցը, 1 ճարտարապետների ուսումնարանը, 7 համալսարանը, 3 բժշկական ակադէմիան, 1 (Անտառային ինստիտուտից) հաղորդակցութեան ճանապարհների ինստիտուտը, 3 հեռագրական ուսումնարանը։ Անտառային ինստիտուտի քննութիւնները չեն վերջացել, բռնում են այնտեղ 4 հոգի. մտել են և գինուորական ուսումնարաններ....

—

Լսում ենք, թէև չը գիտենք որքան ստոյգ է այդ լուրը, որ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ խօլէրայի նշաններ են երևացել։

—

Տէրսկի գաւառի ՎՕՋԴՎԻԺԷՆՍԿԱՅԱ տեղից մեզ գրում են հետևեալը. «Այսօր, ամսոյ 19-ին 1¼ ժամին, կէսօրից յետոյ, այստեղ զգալի եղան երկրաշարժի երկու հարուածներ, հետևելով միմեանց 5—6 վայրկեան ժամանակամիջոցում։ Ամեն մի հարուածը տեւեց մօտաւորապէս մի վայրկեան։ Թէպէտ հարուածները բաւական ուժեղ էին, սակայն ոչ ոքի և ոչնչի վնաս չեն հասցրել. ամբողջ սլօբոդայում զգալի է եղել երկրաշարժը, և ես ինքս զգացի ընակարանիս շարժվելը։»

—

Կ. Պոլսից մեզ գրում են, որ իտալացոց դեսպանն էլ ինչպէս և մի քանի ուրիշ պետութիւնների դեսպաններն են արել, դիմել է Բ. Դրանը՝ առաջարկելով ուշադրութեան առնել ասիական նահանգների, յատկապէս հայերով բնակեցրած նահանգների խնդիրը։

—

Լօնդոնից մեզ տեղեկացնում են, որ այնտեղի թիւրքաց դեսպան Բուսթէմ փաշան հեռագրով դիմելով թիւրքաց կառավարութեանը, առաջարկել է ուշադրութեան առնել թիւրքաց Հայաստանի խնդիրը, ի նկատի ունենալով որ այդ առիթով Անգլիայում օրից օր մաքերը աւելի են յուզվում։

—

Կիրակի, սեպտեմբերի 24-ին, Կովկասեան ցուցահանդիսում այնքան բազմութիւն այցելեց, որքան չէր այցելել և ոչ մի օր։ Այդ օրը այցելողների թիւը 12,000-ի էր հասել։ Այցելու հասարակութեան մէջ կարելի էր նկատել ամեն չրջանի և ամեն պարապմունքի երկու սեռի հասարակութիւն։ Մի բան որ նկատելի է, այդ այն է, որ եկեղ դրսի հասարակութիւն բոլորովին չը կար. հասարակութիւնը համարեա բացառապէս Թիֆլիսում եղողներն են կազմում։ Զարմանալի է, ճշմարիտ, որ գաւառական, մանաւանդ Թիֆլիսին մօտիկ քաղաքների և գիւղերի բնակիչները չեն հետաքրքրվում տեսնելու Կովկասեան առաջին ցուցահանդէսը։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը. «Սեպտեմբերի 20-ին վախճանվեց այստեղի օրիորդաց դպրոցի վարժուհի տիկին Վարդուհի Ռափայէլեան։ Դպրոցի մէջ սիրված և յարգված վարժուհին զոհ գնաց դիֆտերիտ հիւանդութեան։ Տիկին Ռափայէլեանի մահը իսկապէս մի ծանր կորուստ պէտք է համարել ոչ թէ միայն Բագուի դպրոցի համար, որտեղ նա մի քանի տարի է արդէն վարժուհի էր, այլ ընդհանրապէս հայ վարժուհիների չրջանի համար, քանի որ հանգուցեալը ամեն տեղ, որտեղ եղել է, իր ազնիւ բընաւորութեամբ, իր եռանդով, իր զարգացմամբ և համակրելի ու թարմ ձգտումներով կարողացել է վայելել սէր և յարգանք։ Բագու գալուց առաջ հանգուցեալը վարժուհի է եղել մի քարի տարի Վերին-Ագուլիսում, որտեղ և ծնված էր։ Քանի որ մեր իդեան սեռի մէջ չատ քիչ են ինքնուրոյն, զարգացած և գործող կանայք, քանի որ հայ վարժուհիների մէջ էլ մասներով կարելի է համրել նրանց, որոնք իրանց համոզմունքներով և գործունէութեամբ կեանք և ոգի են մտցնում այն դպրոցները, ուր պաշտօն են ստանձնում,—տիկին Վարդուհի Ռափայէլեանի մահը մի կորուստ պէտք է համարել, և այն էլ չատ ցաւալի կորուստ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամէնքից գրում են, որ կառավարութիւնը մտադիր է նոր յայտագիր ուղարկել Կրիտէի գործերի մասին։ Այդ նոր յայտագիրը, ինչպէս ենթադրում են, կառաջարկի մի վճռական որոշում կայացնել Կրիտէի վերաբերմամբ։

—Վիէննայի մի քանի լրագիրներ այն միտքն են յայտնում, որ ցանկալի է Սերբիան տեսնել արմատականների ղեկավարութեան տակ, որոնց ծրագիրը արժանի է համակրութեան։

—Բէլգրադից հեռագրում են, որ կառավարութիւնը և յատկապէս խնամակալութիւնը դժգոհ է Նատալիա թագուհու բռնած դիրքից։

—Կ. Պոլսից գրում են, որ Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է քչացնել իր զօրքերի թիւը, որպէս զի կարելի լինի ծախքը փոքրացնել, և այդպիսով մի փոքրիկ հաւասարակշռութիւն մտցնել բիւդժետի մէջ։ Ցայտնի է որ թիւրքաց ֆինանսները ողորմելի դրութեան մէջ են։

—Աւստրօ-Ունգարիայում ազգայնական վէճերը փոխանակ դադարելու, աւելի են սաստկանում. այժմ այս և այն ազգութեան ներկայացուցիչները սկսել են ցոյցեր տնել միմեանց յատուկ ազգային կամ պետական դրօշակների և այդ դրօշակների գոյների դէմ։ Դա էլ այժմ մի հարց է Աւստրիայում։

—Կ. Պոլսից գրում են. «Ցոյների պատրիարքը հրաժարական զրկեր է Բ. Դուռը, պատճառելով թէ իր գրած թագրիրներ ուշադրութեան չեն առնուիր»։

—Երկու չաբաթի չափ առաջ Կ. Պոլսից զրկված են դէպի Սամսոն, Փոքր Ասիայի նաւահանգիստը, Կրուպի վեց թնդանօթներ և 200 անտուկ ռումբ։

—Կ. Պոլսից գրում են արտաքսմանի հայոց լրագիրներին. «Լուր կայ թէ դատական նախարարութեան խորհրդական Վահան էֆէնդի Հռովմի օսմանեան դեսպան պիտի անուանվի, փոխանակ յունազգի Ֆօթիատէս փաշային։ Իտալական կառավարութիւնը այս մասին իր հաճութիւնը ցոյց տուած է, բայց սուլթանը դեռ վերջնական որոշում տուած չէ»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից մեզ տեղեկացնում են, որ այն օրից, երբ հայ խմբագիրներից մի քանիսը թիւրքաց կառավարութիւնից չքանչանները ստացան, volens nolens էֆէնդի դարձան։

*
* *

Վայն եկել ու ծառաներին տարել է,—Պարիզեցի մի գործարանատէր կամենալով ե ո ւ գնալ առանց ծառայի, սարքել է իր տանը երկաթուղի, խոհանոցից մինչև սեղանատանը։ Այդ փոքրիկ և յարմարեցրած երկաթուղին հասնելով հացի սեղանին՝ ճիւղաւորվում է՝ անցնում է սեղանի երկու կողմերով և միւս կողմում կրկին միանում է։ Հէնց որ զանգակը հնչում է և իմաց է տալիս տանտիրոջ, որ կերակուրը պատրաստ է, նա, այսինքն տանտէրը մատը գնում է ըսպանակի վրա, և իսկոյն սեղեակ է մտնում փոքրիկ, ութ-անիւանի սայլակ, որի վրա դրած է լինում նոր կերակուրը իր բոլոր յարմարութիւններով։ Այդ փոքրիկ գնացքը, տանտիրոջ կամքի համեմատ, և զսպանակի զօրութեամբ կանգ է առնում իւրաքանչիւր հիւրի առաջ, և չարունակում է առաջ գնալ, հէնց որ հիւրերից իւրաքանչիւրը վերցնում է իր հաւանած կերակուրը։ Գնացքի արագութիւնը կախված է տանտիրոջ կամքից։ Նոյն գնացքը յետ է տանում կեղտոտ ամանները, և բերում է մաքուր ամաններ, որ իրար մէջ բաժանում են իրանք հիւրերը։

*
* *

Միացեալ-Նահանգներում, Վաշինգտոնում առաջիկայ ընտրութիւնները չատ հետաքրքրական և աղմկալի պիտի լինեն,—որովհետև կանայք վճռել են անպատճառ մասնակից լինել այդ ընտրութիւններին։ Այդ իրաւունքը նրանք չունեն, բայց չը նայած դրան գեղեցիկ սեռը վճռել է վերջապէս մի վճռական քայլ անել, և եթէ տղամարդիկ դիմադրելու լինեն իրանց «թանգագին կէսի» այդ ձգտումներին, այն ժամանակ կանայք, ինչպէս վճռել են, դիմելու են նահանգի բարձրագոյն դատարանին իրանց իրաւունքները պաշտպանելու համար։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱԾԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿՕՊԷՆՀԱԳԵՆ, 22 սեպտեմբերի։ Դանիայի արքայական տունը և նրա օգստափառ հիւրերը երէկ գնացին Հելսինգէր, որտեղ նախաճաշեցին բրիտանական նաւատորմի ծովապետի նաւի վրա։ Երեկոյեան Դանիայի նաւատորմի օֆիցերների ընկերութիւնը Կօպենհագենում մի պարահանդէս կազմեց ի պատիւ անգլիական օֆիցերների։ Կիրակի օր ռուսաց և անգլիական եկեղեցիներում ժամերգութիւն կը լինի, որից յետոյ «Держава» նաւի վրա նախաճաշիկ կը լինի, որին ներկայ կը լինեն թագաւորը, թագուհին, բրիտանական օգոստափառ հիւրերը, այլ և ռուսաց և անգլիացոց դեսպանութիւնների անդամները կանանցով։

ՊԱՐԻԶ, 22 սեպտեմբերի։ Վիէննայից հաղորդում են, որ Բոլգարիան տեղեկացրել է Թիւրքիային, որ այն բոլոր զինջումները, որ կանէ Բ. Դուռը յոյներին Կրիտէի հարցի վերաբերմամբ, անմիջապէս իր հետևանքները կունենայ Մակեդոնիայում և Բոլգարիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի։ «Новое Время» լրագիրը լսել է, որ արդարադատութեան մինիստրութեան մէջ մշակված է մի ծրագիր, որը վերաբերում է այն սահմանափակող միջոցներին, որոնք պէտք է գործադրվին հրէաներին երդուեալ հաւատարմատարների թւում ընդունելու ժամանակ։

ԲԷԼԳՐԱԴ, 23 սեպտեմբերի։ Թագուհին այցելեց միտրոպոլիտ Միխայլին։ Դա միակ այցելութիւն է, որ նա արել է։—Բէլգրադի քաղաքապետ Գեօրգիեվիչի, փոստերի և հեռագրատների կառավարիչ Անդելիչի, Սոֆիայի նախկին սերբիական գործակալ Դանիչի, և Բերլինի դեսպան Խրիստիչի,—որոնք ամենքն էլ Միլանի արքանեակներն էին,—պաշտօնից արձակելը Սերբիա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամէնքից գրում են, որ կառավարութիւնը մտադիր է նոր յայտագիր ուղարկել Կրիտէի գործերի մասին։ Այդ նոր յայտագիրը, ինչպէս ենթադրում են, կառաջարկի մի վճռական որոշում կայացնել Կրիտէի վերաբերմամբ։

—Վիէննայի մի քանի լրագիրներ այն միտքն են յայտնում, որ ցանկալի է Սերբիան տեսնել արմատականների ղեկավարութեան տակ, որոնց ծրագիրը արժանի է համակրութեան։

—Բէլգրադից հեռագրում են, որ կառավարութիւնը և յատկապէս խնամակալութիւնը դժգոհ է Նատալիա թագուհու բռնած դիրքից։

—Կ. Պոլսից գրում են, որ Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է քչացնել իր զօրքերի թիւը, որպէս զի կարելի լինի ծախքը փոքրացնել, և այդպիսով մի փոքրիկ հաւասարակշռութիւն մտցնել բիւդժետի մէջ։ Ցայտնի է որ թիւրքաց ֆինանսները ողորմելի դրութեան մէջ են։

—Աւստրօ-Ունգարիայում ազգայնական վէճերը փոխանակ դադարելու, աւելի են սաստկանում. այժմ այս և այն ազգութեան ներկայացուցիչները սկսել են ցոյցեր տնել միմեանց յատուկ ազգային կամ պետական դրօշակների և այդ դրօշակների գոյների դէմ։ Դա էլ այժմ մի հարց է Աւստրիայում։

—Կ. Պոլսից գրում են. «Ցոյների պատրիարքը հրաժարական զրկեր է Բ. Դուռը, պատճառելով թէ իր գրած թագրիրներ ուշադրութեան չեն առնուիր»։

—Երկու չաբաթի չափ առաջ Կ. Պոլսից զրկված են դէպի Սամսոն, Փոքր Ասիայի նաւահանգիստը, Կրուպի վեց թնդանօթներ և 200 անտուկ ռումբ։

—Կ. Պոլսից գրում են արտաքսմանի հայոց լրագիրներին. «Լուր կայ թէ դատական նախարարութեան խորհրդական Վահան էֆէնդի Հռովմի օսմանեան դեսպան պիտի անուանվի, փոխանակ յունազգի Ֆօթիատէս փաշային։ Իտալական կառավարութիւնը այս մասին իր հաճութիւնը ցոյց տուած է, բայց սուլթանը դեռ վերջնական որոշում տուած չէ»։

Լուսաւորչի վանքից վերադարձած գրում եմ քեզ. վերի գրածներս կարդից դուրս միջանկեալ մի կտոր է։ Շարունակենք։

Այս նամակովս ուզում եմ ծանօթացնել քեզ քաղաքիս մի երևելի, և ազնուաշուք անձի հետ, որը կառավարութեան դատարանի անդամ է. հարուստ կարնեցիների համար Կրեսոսի չափ... մի խօսքով մի Ցակովբ էֆէնդիի հետ... էֆէնդիներից չը վախենաս իսկոյն, դեռ ևս չատերին առջևդ ի ցոյց պիտի հանեմ։

Երբէք պատահել է քեզ տեսնել Գէօթէի Ֆաուստը բեմի վրա. երևակայիր Մէֆիստոֆէլը առանց կոտոշների և եւրոպական հագուստով—այդ Ցակովբ էֆէնդին է.... որը ունի մի յայտնի եղբայր ևս... Արաբկերցիներ են. Կարին քաղաքի կէսը իրանցն է... թէ ինչպէս են ունեցել, այդ հետաքրքիր է և ես քեզ կը պատմեմ, թէ անցեալ տարի ձմեռը մեր թաղի մէջ Ցակոբ էֆէնդու եղբայրը ինչ մի սխրագործութիւն արաւ։

Մեզ մի դրացի այրի կին կար, որը ունէր երկու մերկանդամ մանուկներ, կինը լուացք էր անում և դրանց ապրեցնում. իր ամուսինը նոր էր մեռել և այդ էֆէնդիին դժբաղդաբար պարտ էր 10 ոսկի... Ցանկարծ ձմեռը Ցակոբ էֆէնդու եղբայրը մարդ է ուղարկում կնոջ մօտ թէ տունը թող, դատարկէ և դուրս ել, որովհետև տունը իմն է... բանից դուրս է գալիս որ 10 ոսկին ծնել եղել էր 30 ոսկի և կառավարութիւնն էլ էֆէնդիի «խաթրի» համար 60 ոսկիանոց տները միայն 30 ոսկի էր գնահատել և պարտքի տեղ յանձնել նրան։

Եւ ինչու Կարինի կէսը դրանցը չը լինէր.... Ցակոբը էֆէնդին այդպիսի «ծրտի-պրտի» բաներով չէ զբաղվում, նա միշտ գիւղացիների հետ գործ ունի և պիտի տեսնել թէ նա որպիսի ջերմութեամբ պաշտպանում է գիւղացիներին, որովհետև նա միայն մի քանի հարիւր ոսկի գիւղացիներին պարտք տալով, որպէս ընծայ ստանում է նրանցից իւրաքանչիւր տարի այնչափ լուղ, պանիր, ալիւր, վառելիք, բանջարեղէն, որ բացի իր տան պէտքերը հոգալուց, մնացածից կարողանում է գոյացնել մի կլորիկ գումար տարեկան. ապա ստանում է տոկոսի փոխարէն իր տունը մի տարի լաւ կառավարելու չափ գիւղացիների ցորենը, և երբ դրամի վճարման ժամանակն է գալիս, 10 ոսկին ծնած-եղած 20 ոսկի՝ ծանրանում է գիւղացիների վրա և Ցակոբը էֆէնդու ունեցած բազմաթիւ պարարտ և ընդարձակ հողերի վրա աւելանում է մի քանի օրավար ևս, և էֆէնդին քմծիծաղով անցնում է իր կողոպտած գիւղացու մօտից, որը իր կնոջ և մերկանդամ որդկերանց հետ, եկեղեցու դրանը կանգնած ձեռք է մեկնել անցորդներին...

Եւ մտնում է մեր բարեպաշտ էֆէնդին եկեղեցին, պաշտում է մատուռի պատերը, կուրծք է ծեծում նրա դրան առաջ, մոմ է առնում, ողորմութիւն է բաժնում և եկեղեցու մէջ ջերմեռանդութեամբ խաչակնքում է ամեն մի «Ցիսուս Քրիստոս» բառերը լսելուն պէս...

Այդպէս ողորմած և բարեպաշտ էֆէնդիներ քանի՞ հատ կուզես համրեմ։ Գանք հիմա փոքր ինչ էլ խօսելու այն «կարմիր ֆէսերով վսեմաշուք» էֆէնդիների մասին, որոնք բազմում են յ ա տ ե ա ն ե ր ե ս փ ո խ ա ն ա ց և կ ա ռ ա վ ա ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ա ց...

Այդ կողմերը դուք ս ա ռ ա ֆ ն ե ր չունիք։ Սառաֆ նշանակում է սեղանաւոր, բայց այստեղ ս ա ռ ա ֆ նշանակում է կ ա ր մ ի ր ֆ է ս, որի տակ ծածկված է մի երևելի գիտուն, որը ունի իր տան մէջ մի ահագին գրադարան և հաշիւը չէ պահված թէ քանի հարիւր մարդ է մատնելու ոչնչացրել...

Պիտի հարցնես թէ մի ահագին գրադարան ունեցող և գիտուն մարդը ընդունակ է մ ա տ ն ի չ լինելու։ Բացատրեմ։

Ահա մի որ և իցէ կողմից մտնում է Կարին մի որ և իցէ մարդ, որին իսկոյն չրջապատում են ոստիկանները, հաւաքում են նրա մօտ գըտնված բոլոր գրքերը և թղթերը և տանում են թարգմանչական դիւանը։

Այնտեղ նստում է մի պ ա ր օ ն, որը, եթէ գտնում է մի վտանգաւոր գիրք (որը չատ և չատ հազիւ է պատահում) ուղարկում է գրաքննական ատեանին, իսկ միւսների համար ընդհանրապէս վճռում է «միւղիր» (արգելված), թէկուզ լինէին պատկերներ. յետոյ նա ընտրում է այդ գրքերի միջից իր սիրածները և ուղարկում է տուն, իսկ միւսները մի կողմ է ձգում։

Եւ ահա մտաւ կարմիր ֆէսով սառաֆ էֆէնդին, որը գրքերը տեսնելուն պէս խնդրում է որ իրան տան, և ս ա ռ ա ֆ ի տունը լցվում է գրքերով, իսկ ով որ տեսնում է այդ գրքերը՝ գոչում է

—Ի՞նչ գիտուն է Սառաֆ էֆէնդին...

Վայ նրան ով Ռուսաստանից եկաւ կամ Վանից. սառաֆը այս կողմ այն կողմ կընկնի, կիմանայ անցորդի անունը և միւս օրը, խեղճ անցորդը իսկոյն գնում է բանտ, որ քննվի և մի քանի ամսից յետոյ եթէ արդարացաւ՝ աղտոտվի կողոպտված և հիւանդացած...

Ահա այսպէս է մեր ազնիւ, կարմիր ֆէսով Սառաֆ էֆէնդին. բայց ինչու ուրեմն «կարմիր ֆէսով»։ Մի չտապիր, դեռ ևս կ ա ր մ ի ր ֆ է ս ե ր ը իմ մի քանի նամակներիս նիւթ պիտի լինեն։ Եկող անգամ։

Սեղմում եմ ձեռքդ։ Ապրօ

յում շատ լաւ տպաւորութիւն է թողել։ Նատալիային այցելեցին բոլոր դեսպանները, բացի գերմանացոց և թիւրքաց դեսպաններից։ Արմատական կուսակցութեան ձեռնհաս շրջաններում. կարծում են, որ երկրի խաղաղութիւնը պահանջում է, որ սերբիական թագաւորի ծնողները հեռանան. ինչպէս երևում է այդ կարծիքին է և կառավարութիւնը։

ԱԼԺԻՐ, 23 սեպտեմբերի։ Տեղական առևտրական կլուբը խնճոյք տուեց ի պատիւ «Աղմիրալ Կօրնիլով» նաւի օֆիցերների։ Գեներալ Բրէօր Ֆրանսիական զօրքի և նաւատորմի կողմից ռուսաց զօրքին և նաւատորմին համակրութիւն յայտնեց, և առաջարկեց խմել երկու ազգերի զրաշների աջողութեան համար։ Ռուսաց նաւի հրամանատար Ալէքսէեվ, շնորհակալութիւն յայտնելով Բրէօրի արտայայտած զգայմունքների համար, առաջարկեց նախագահ Կարնօի, Ալժիրի նահանգապետի, գեներալ Բրէօրի և ցամաքային ու ծովային զօրքի կենացը։ Աղդաբնակութիւնը ոգևորված կերպով ողջունում էր ռուսաց օֆիցերներին փողոցներում։

ԽԱՐԿՕՎ, 23 սեպտեմբերի։ Հարաւային Ռուսաստանի հանքագործարանատէրերի տասն և չորրորդ ժողովը կը գումարվի նոյեմբերի կէսին։

ԲԵՐԼԻՆ, 23 սեպտեմբերի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնա այսօր մեկնեցին Բերլինից Լիւդվիգսլիւստ։

ՊԱՐԻԶ, 23 սեպտեմբերի։ Ռուս էկսպեդիցիաների ժողովը անհրաժեշտ համարեց հիմնել Պարիզում ռուսաց մի ընկերութիւն, որը այստեղ ռուսաց արդիւնաբերութիւնների նմուշների մշտական ցուցահանդէս կազմէր։

ՍՕՖԻԱ, 23 սեպտեմբերի։ Պրինց Ֆերդինանդ վերադարձաւ այստեղ իր բոլգարական ճանապարհորդութիւնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 սեպտեմբերի։ Ս. Սինոդի օբէր-պրօկուրօր Պօբէդոնոսցեվ երէկ ճանապարհ ընկաւ դէպի հարաւային Ռուսաստան, իր բացակայութեան ժամանակի պարտաւորութիւնների կատարելը յանձնելով օբէր-պրօկուրօրի օգնական Սմիրնովին։ «Новое Время» լրագիրը լսել է, որ հոկտեմբերի սկզբին երկաթուղիների զբաղխաւոր տեսուչ դնդապետ Վենդրիխ ամենախիստ կերպով կը քննէ Կուրսկ-Խարկովի-Լոզովեան և Լոզով-Սեվաստոպոլեան երկաթուղային գծերը՝ համեմատ նոր կազմած յատուկ ծրագրի։

ԲԵԼԳՐԱԴ, 24 սեպտեմբերի։ Պետական խորհրդի, պետական վերահսկողութեան և դատարանների արմատական բարեփոխութիւնների պատճառով՝ մշակվում է այդ վարչութիւնների ծառայողների ցուցակը. նապրեղնիկները բոլոր տեղերից դուրս են գցվում։ Երէկ Պերսիանի ներկայացրեց թագուհուն միսսիայի առաջին քարտուղարին և նրա ամուսնուն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի։ Այսօր ուղևորվում են դէպի Գերմանիա՝ Կայսերական Պալատի մինիստր կոմս Վօրոնցով—Դաշկով, և Կայսերական տան կառավարիչ Բիլիտէր, մի քանի պաշտօնեաներով։ Գիտութիւնների ակադէմիան պարգևեց 500-ական բուբլու մրցանակները հետեւեալ անձանց. Մոչուլսկուն՝ «Голубиная книга» բանաստեղծութեան մասին պատմական-գրական քննադատութիւնների համար, Գուբերտիին՝ XVIII դարի ռուսաց մատենագրութեան նիւթերի համար, Շմուրլոին՝ «Եվգենիյ Միտրոպոլիտի» կենսագրութեան համար, Սեմեվսկուն՝ «Ճորտերի զրութիւնը Ռուսաստանում XVIII և XIX դարերում» գրքի և Պլատոնովին՝ «Հին ռուսաց աւանդութիւններ VII դարի» դրուածքի համար։

ՊԱՐԻԶ, 25 սեպտեմբերի։ Ցայտնի են 135 կրկնաքուէարկութիւնների հետեանքները. ընտրված են վերջնականապէս 97 հանրապետականներ և 38 հակառակորդներ հանրապետութեան։ Դեռ յայտնի չէ թէ ինչ հետեանք ունեցան մնացած կրկնաքուէարկութիւններ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 22-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	96 ր.	10	›
Բերլինի վրա 100 մարկ —	47 ›	—	›
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 ›	10	›
Ոսկի — արժէ —	7 ›	66	›
Մաքսային կուպոններ —	153 ›	25	›
Արծաթ — — —	1 ›	11	›
Բօրսային դիսկօնտներ —	6 և	7%	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 ›	—	›
— — — — 2-րդ —	99 ›	25	›
— — — — 3-րդ —	99 ›	—	›
— — — — 4-րդ —	99 ›	—	›
— — — — 5-րդ —	99 ›	—	›
— — — — 6-րդ —	99 ›	—	›
Նոր 4%	84 ›	—	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 ›	37	›
— — 2-րդ —	99 ›	25	›
— — 3-րդ —	99 ›	37	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	261 ›	50	›
— երկրորդ —	238 ›	50	›
5½% բէնտա	101 ›	75	›
Ոսկեայ բէնտա	173 ›	—	›
Եօթերորդ կօնսոլիդ. փոխառ.	142 ›	25	›
Նոր երկաթուղային բէնտա	99 ›	—	›
5% գրաւակա. թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	140 ›	—	›
— — թղթադ.	92 ›	—	›
Գրաւ. թղ. Ազն. բանկի	97 ›	87	›
Գիւղական բանկի	101 ›	75	›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	97 ›	—	›
— —Ռութայիսի-18 և 43տ.	98 ›	25	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	95 ›	—	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 ›	—	›
Օդեսայի — —	93 ›	75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	83 ›	75	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, բէվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնտրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին՝ անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ։ Տուն Պոպովի Միքայելեան փողոցի անկիւն № 9 և Ելիսավետինսկայա № 2, Ինտենդանտութեան մօտ, Վօրոնցովեան կահաւորված սենեակների դիմաց։

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ. 4—14

„ՄԱՍԻՍ“

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հրատարակվում է Կ. Պոլսում ամեն ամսի 1-ին և 15-ին։ Տարեկան գինն է ռուսաստանցիների համար 2 բուբլի։ Հասցէն՝ Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան-խան։ 3—4

С. А. ЕГІАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНІЯ ПО ИСТОРІИ УЧРЕЖДЕНІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ I

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организація и управленіе общины въ связи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина. 9—10 (ե)

Լոյս տեսաւ

„Գրքերի հրատարակութեան ընկերութեան“ հրատարակութեամբ

„ՍՈԿՐԱՏԷՍ“

Թարգմանեց օր. Թէկղի Ստեփոյեան

Գինն է 10 կոպէկ։ 2—4

ՂՈՒԲԱՅԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ տարեկան 500 բուբլի ռոճիկ՝ շաբաթական 24 դասի համար հայերէնից, թուաբանութիւնից և ձեռագործից։ Ցանկացողները շ ա ա պ ո վ պէտք է դիմեն դպրոցի հոգաբարձութեան։ 2—3

Ուսուցիչ Ց. Իսուֆեան ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԻՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ։ Այստեղ պատրաստվում են աշակերտներ արքունի և հայոց ուսումնարանների համար և կրկնութիւններ են անում։ Դիմել հետևեալ հասցէով. Կուկիա, Սիմեօնովսկի փողոց, № 16։ Մի և նոյն տեղը տրվում են վարձով և սենեակներ բոլոր յարմարութիւններով։ 3—5

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Տալիս եմ մանագիտաբար ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասեր՝ պարզ և կրկնակի իտալական, երրակի ռուսաց և անգլիական սիստեմով։

Հարցնել Կաղեօնեայա Պալատում պ. ՏԷՐ-ԱԿՈԲԵԱՆՑԻՆ։ 3—5 (և. չ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 29 սեպտեմբերի (11 հոկտեմբերի) ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ALPHÉE (ԱԼՖԷ) նաւապետ CAYLUS (ՍԷԼԻՍ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօս և Լակավալ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒՐԵԱՆ ՀԵԶՈՒՐԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍՏ։ 2—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական գնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիլօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 18—20 (ե. շ.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻ

„ՄԱՆԻԿ“

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԷՊ

Գինն է 40 կոպէկ 1—5

ՂՈՒԲԱՑԻ հայոց օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ։ Պայմանների մասին դիմել Իսուֆեանին 4—5 ժամը երեկոյեան, Կուկիա, Սիմեօնովսկի փողոց, № 16։ 1—3

Այն անձինք, որոնք յանձն էին առել տարածել „ԱՐԲԵՑՈՂԻ ՄԱՀԸ“ և „ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ“ գրքոյկները, խնդրեմ որ բարեհաճեն շուտ ուղարկել թէ ծախված գրքոյկների փողը և թէ չը ծախված գրքերը, ճանապարհածախսը հանելով ծախված գրքերի գնից, այս հասցէով. Тифлисъ. Въ Анановское училище, Оганесу Юсуфянъ. 3—5

Բժշկապետ ՐԷՅԽ վերադառնալով ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, նորից սկսել է ընդունել ԱԶՔՈՎ հիւանդներին (Գրիբոյեդովսկայա փողոց № 3)։ 3—5

ՄԷԿ ՈՒՍՈՒՑԻՉ ԿԱՄԵՆՈՒՄ Է ՄԱՄՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ՏԱԼ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ։ Յանձն է առնում նոյնպէս և կրկնութիւններ անել գիմնազիական առարկաներից աշակերտների հետ։ Ցանկացողները կարող են դիմել Գայիանեան օրիորդական դպրոցը, ուսուցիչ Մաժինեանին, առաւօտեան 11—12 ժամը։ 4—5

Дозволено цензурою, Тифлисъ 25 Сентября 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.